

տեղի ունեցաւ եւ այն, որ քրիստոնեայ դարձած հայերի մէջ մոռացութեան գիրկը նետուեցին անգիր բանահիւսութեան զանազան ճիւղերը, ինչպէս նաեւ գուսանական արուեստը: Եւ սակայն դրա փոխարէն « ի կեանս կոչուեց մի՛ բաղդատարար հարուստ՝ պատմական մատենագրութիւն, որ մեզ ոչ միայն հնարաւորութիւն է տալիս հետեւելու Հայաստանի պատմութեանը Դ. դարու սկզբից սկսած — բաւականաչափ պայծառութեամբ — այլ եւ վերստուգելու պատմական դէպքերը Պարսկաստանում եւ Կովկասեան երկիրներում:

Միջնադարի ո՞ր ժողովուրդը հպարտանալ կարող է, օրինակ, նրանով, որ — լինի ազգային լեզուով թէ՛ ամենաիրկիչ լատիներէնով գրի առնուած — Եղիշէ պատմագրի՝ Վարդանի եւ նրա գինակիցների հերոսական կռուի նկարագրութեանը քով բերէ համապատասխան մի երկ:

Բայց նաեւ զուտ աստուածաբանական գրականութիւնը (հայոց) ցուցադրում է մի քանի՛ ըստ ամենայնի աչքառու գործեր: Օրինակ՝ Եգնիկի «Եղծ Աղանդոց»ը:

Անգամ այն պարագային, եթէ Մեսրոպ Մաշթոցի գործը նրանով միայն սահմանափակուած լինէր, որ նա մի օտար այբուբեն դրած լինէր հայկականի հիմքում, մի քանի նշանագրերով միայն հարստացրած լինելով այն, դարձեալ արժանի պիտի լինէր հիացմունքի, — շարունակում է Մարքվարտ, — քանի որ Մաշթոցի այբուբենը ենթադրում է որպէս նախապայման՝ բաղաձայններով հարուստ հայերէնի հնչիւնաբանական ինքնայատուկ սիստեմի վերին աստիճանի զարմանալի եւ հմտալից ծանօթութիւն: Մնաց որ, գրերի գիւտի պատմութիւնը տակաւին լուսաբանուած է, սպառիչ կերպով:

Այստեղ էլ ծագում է նախամեսրոպեան գրերի գոյութեան խնդիրը Հայաստանում:

Վերջին հարցն էլ նախ մանրակրկիտ քննութեան առարկայ է դարձնում Մարքվարտ, ինչպէս նաեւ հայերէն մի քանի նշանագրերի արհեստագիտական կապը յունական եւ ուրիշ այբուբենների համապատասխան գրերի հետ: Մարքվարտ առաջ է բերում եւ այն բոլոր կարծիքները եւ տեսակէտները, որոնք քննութեան

առարկայ խնդրի վերաբերմամբ արտայայտուած են եղել առաջ:

Այդ ամենի վրայ, որչափ եւ հետաքրքրական են, բնականաբար կանգ առնել չենք կարող այս էջերում: Տանք միայն եզրակացութիւնները, որոնց յանդում է հետազոտողը՝ պատմական աղբիւրների (Կորիւն, Ղազար Փարպեցի եւայլն) քննութեամբ:

Յայտնի է, որ հայերէն գրերի գիւտից առաջ Հայաստանում գործածական էին յունարէնը եւ ասորերէնը՝ թէ՛ որպէս զպրոցական եւ թէ՛ որպէս յարաբերական լեզու. առաջինը Արեւմտեան (յունական), իսկ երկրորդը Արեւելեան (պարսկական) Հայաստանում: Բնական է ուրեմն, որ գրաւոր յարաբերութեանց համար էլ մեզնում գործածական էին այդ լեզուները: Իսկ ի՞նչ էին այսպէս կչուած «Դանիէլեան գրերը»:

Յայտնի է մեր պատմիչների տեղեկութիւնը այդ մասին: Ս. Մեսրոպ Ժամանակի հայոց կաթողիկոս Սահակ Պարթեւին յայտնում է հայերէն գրեր ունենալու մասին իր մըտորումները: Նա այդ մասին դանում է կաթողիկոսի կատարեալ համամտութիւնը: Այդ մեծ խորհուրդին հաղորդակից է լինում նաեւ Վրոնաւապուհ Թազաւորը: Երբ մի օր դրանց բոլորի մասնակցութեամբ ժողով է տեղի ունենում հայոց արքունիքում, Վրոնաւապուհ պատմում է ազգով ասորի մի Դանիէլ կաթիկոպոսի մասին, որ ունեցած եւ գործածելիս է եղել հայերէն գրեր:

Թագաւորը Վահրիճ անունով մէկին ուղարկում է Դանիէլի հարեւան Հարէլ քահանայի մօտ՝ սրա միջոցով ստանալու եւ Հայաստան բերելու Դանիէլեան նշանագրերը, որ եւ կատարում է:

Մաշթոց հաւաքում է երեխաներ եւ սկըսում նրանց հետ հայերէն պարագել՝ Դանիէլեան նշանագրերի օգնութեամբ: Մրկու տարուան փորձերը ցոյց են տալիս սակայն, որ այդ նշանագրերը թերի են, անբաւարար՝ հայերէն բոլոր հնչիւնները արտայայտելու համար: Դրանից յետոյ է միայն, որ Մեսրոպ Մաշթոց առաջագրում եւ յաջողեցնում է իր անուան հետ յաւիտենապէս կապուած գրերի գիւտը:

Մեսրոպ Մաշթոցի գլխաւոր ծառայութիւնը եղել է այն, ըստ Մարքվարտի, որ նա